ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

N 2

ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

25 փետրվար 2015թ.

Հարգելի պարոն Հարությունյան

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 30/8 հոդվածի համաձայն Ձեզ է ուղղարկվում Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի ավագանու 2015թվականի փետրվարի 20-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը և որոշումները:

Առ դիր 12 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱԼԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 03502254

Կատ՝ Ա. Պետրոսյան
Հեռ. 022263539

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
20 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 4-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջը համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագանու 2015թվականի փետրվարի 20-ի N 2 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1. ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՊԱՀԻՑ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԷԴԻԿ
3. ՄՀՈՅԱՆ ՄԱՋԻԹ
4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 5-Ն

ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարեպության օրենքի 77^5 հոդվածի, նկատի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015թվականի հունվարի 16-ի N 07/15.1/99-15 գրությունը, համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 18-ի << Բալահովիտ գյուղական համայնքի վարչական տարածքի 2015թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> N 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1/որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԷԴԻԿ
3. ՄՀՈՅԱՆ ՄԱՔԻԹ
4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Բաղրամյան գյուղական համայնքի
ավագանու 2015թ-ի փետրվարի 20 – ի
թիվ 5-Ն որոշման

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր .մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ. 501-մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000դրամ

3) ոչ հիմանական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.

բ. 20 և ավելի ք.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառակա շանակության փոփոխություն՝ **1500 դրամ.**

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3 .Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրք սահմանել՝ 1875 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրք սահմանել 1875 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 170000 դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանել 30000դրամ

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 3000դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000դրամ

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար, տեղական տուրք սահմանել 50000 դրամ:

7.Համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), զվարճանքի օբյեկտները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել

1) առևտրի օբյեկտների համար 30000 դրամ.

2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 100000դրամ.

3)բաղնիքների (սաունաների) համար 200000 դրամ.

4)խաղատների կազմակերպման համար 900000 դրամ.

5)շահումներով խաղերի կազմակերպման համար 250000 դրամ.

6)վիճակախաղերի կազմակերպման համար 150000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ-ի տեղական տուրք սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչեւ 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1000 դրամ.

2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 3000 դրամ:

10.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

12.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա - տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 20000 դրամ

13. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերադարձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմինների մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ:

14. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար սահմանել 5000դրամ:

15. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար վճարը սահմանվում է

1)կենցաղային աղբի համար՝

ա.ըստ հաշվառման անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 100 դրամ

2) ոչ՝ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 2000դրամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար 5000դրամ:

16. Համայնքի կողմից շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է

1/ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ըստ ծավալի մեկ խորանարդ մետր հավաքման և տեղափոխման թույլտվության համար 400դրամ

2/ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ըստ զանգվածի մեկ տոննայի հավաքման և տեղափոխման թույլտվության համար 1000դրամ

Համայնքի ղեկավար Կ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, քննարկելով Կոտայքի մարզպետարանի աշխատակիցների կողմից Բալահովիտ գյուղական համայնքում 2014թվականի նոյեմբերի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում վարչական հսկողության իրականացման վերաբերյալ կազմված արձանագրությունը՝ հանձնված N 07/15.1/301-15 գրությամբ՝ 1-16 հավելվածները ըստ բնագավառների, համայնքի ավագանին որոշում է

1. Ընդունել ի գիտություն և ի կատարում կազմված արձանագրության հավելվածներում ըստ բնագավառների հայտնաբերված խախտումները, թերությունները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության գործող օրենքների պահանջներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ
2. ՀՈՒՆԱՆՅԱՆ ԷԴԻԿ
3. ՄՀՈՅԱՆ ՄԱՔԻԹ
4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀՈՒՍԻԿ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
6. ՎԻՐԱԲՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Բարեհովիտ գյուղական համայնքի
ավագանու 2016թ-ի փետրվարի 20 – ի
թիվ 6-Ա որոշման

Հավելված 1

Արտակարգ իրավիճակների բնագավառում

1. Տարահանման հանձնաժողովի կողմից տարահանման պլանի մշակումը գտնվում է աշխատանքային փուլում
2. Տարահանված բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանը գտնվում է մշակման փուլում:
4. ՈՒժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանները կկազմվի և կհամաձայնեցվի ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ և կներկայացվի համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի հաստատմանը - գտնվում է մշակման փուլում:
5. ՈՒժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար պլանների համակողմանի ապահովման մասին հայտերը կներկայացվի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն - գտնվում է մշակման փուլում:
6. Քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտումը յուրաքանչյուր տարի՝ հունվարի 1-ի դրությամբ: Ընդունվել է, որպես ի գիտություն:

6.1 Կազմվել է քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների հաստատված կանոնադրությունը

8.1 ընդունվել է ի գիտություն

8.2 Կատարման ժամկետը՝ ընթացիկ տարվա ավարտը

Հավելված 2

Առևտրի և ծառայությունների բնագավառ

1.Ընդունվել է ի գիտություն

3.ընդունվել է ի կատարում

5.ընդունվել է ի կատարում

29.ընդունվել է ի կատարում

30.ընդունվել է ի կատարում

33.ընդունվել է ի կատարում

34.ընդունվել է ի կատարում

35.ընդունվել է ի գիտություն

40.ընդունվել է ի կատարում

Հավելված 3

Բնապահպանության բնագավառում

14. Ընդունվել է ի գիտություն

20. ընդունվել է ի գիտություն

20.2 ընդունվել է ի գիտություն

Հավելված 6

Հողօգտագործման բնագավառում

1. Համայնքի գլխավոր հատակագծի մշակումը և կազմումը կավարտվի մինչև տարեվերջ:

13. ընդունվել է ի կատարում - խախտումը վերացվել է

14. ընդունվել է ի կատարում - խախտումը վերացվել է

34. ընդունվել է ի կատարում - խախտումը վերացվել է

Հավելված 7

Կրթության բնագավառում

2. Ծրագրերի մշակում իրավիճակի վերլուծության, կարիքների ճշգրտում և ընդգրկում զարգացման ծրագրերում – կատարման ժամկետը ընթացիկ տարվա ավարտը:

Հավելված 8

Մշակույթի բնագավառում

1.Մշակույթի ոլորտի համայնքային ծրագրերի ներսում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում – կատարման ժամկետը ընթացիկ տարվա ավարտը:

2.Ընդունվել է ի գիտություն

4.Մշակվել է ծրագրերի իրականացում տարվա ընթացքում

5.Իրականացված միջոցառումների մասին փաթեթը /ստեղծել/ պահել

Կատարման ժամկետը տարվա ընթացքում

Հավելված 9

Պաշտպանության բնագավառ

1. Սահմանված կարգով վարել զինապարտների գրանցամատյանը
   – կատարման ժամկետ՝ մշտապես
2. Գրանցամատյանների վարումը իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով - սահմանված ժամկետներում
   - կատարման ժամկետ՝ մշտապես
8. Պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում, սահմանված կարգով, ներկայացնել տարածքային զինվորական կոմիսարիատ:
   Կատարումը՝ մշտապես

12. Սահմանված կարգով իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառույթները - կատարումը՝ տարվա ընթացքում:

17. Սահմանված կարգով իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործառույթները - կատարումը՝ տարվա ընթացքում:

Հավելված 10

Սոցիալական Պաշտպանության բնագավառում

2. Ապահովվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007թ – ի ապրիլի 12 – ի N 62 – Ն հրամանով հաստատված ձև 1 մատյանը:

Հավելված 11

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

2. Համայնքի բնակչության շրջանում անցկացնել ֆիզկուլտուրային – առողջարարական և մարզական միջոցառումներ: Անցկացման մասին փաստաթղթերը՝ հիմքերը, պահել աշխատակազմում

-Կատարման ժամկետ՝ ընթացիկ տարվա ավարտը

2. Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, ստեղծել հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմաններ

Կատարումը տարվա ընթացքում. Ընդգրկել զարգացման ծրագրերում:

3. <Լավագույն գյուղական համայնք> միջոցառումների անցկացման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ, նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:

Կատարումը՝ ընդունվել է ի գիտություն

4. Նպաստել համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:

Անցկացման վերաբերյալ հիմքերը, փաստաթղթերը պահել աշխատակազմում

Կատարումը՝ ընդունվել է ի գիտություն

5. Ֆիզկուլտուրային առողջարարական ու մարզական աշխատանքներ անցկացնելու և առողջ կենսակերպի քարոզչության մասին հանրությանը տեղեկացնել ԶԼՄ – ների միջոցով և պաստառների տեսքով:

Ընդունվել է ի գիտություն

Հավելված 13

Ոսիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ

Հանրային միջոցառման անցկացման տեղեկացումն համայնքի ղեկավարն անհապաղ տեղեկացնում է կազմակերպիչներին և ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը, ինչպես նաև դրա մասին գրություն է փակցնում ՏԻՄ – ի վարչական շենքում:

-Ընդունվել է ի գիտություն

Հավելված 14

Առողջապահության բնագավառ

4.2 Ապահովել կոնտեյներների մակնշումը աղբահանությունը կատարողի վերաբերյալ Ընդունվել է ի գիտություն

4.2.2 Ապահովել կոնտեյներների մաքրման և ախտահանման ենթակա մակերեսների առկայությունը:

Ընդունվել է ի գիտություն

4.8 Ապահովել կոնտեյներների ախտահանումը համապատասխան ախտահանիչ լուծույթներով:

Ընդունվել է ի գիտություն

Հավելված 15

Քաղաքաշինական բնագավառ

2.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի պատվիրում

Կատարումը՝ ընթացիկ տարվա վերջ:

3.Պատվիրել գլխավոր հատակագիծ

Կատարումը՝ ընթացիկ տարվա վերջ

5.Համայնքում վարել քաղաքաշինական մատյաններ նմուշին համապատասխանող մատյաններով:

Կատարված է:

Հավելված 16

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ ՀՀ մարզպետարանների կողմից իրականացվող

Համայնքի ավագանու գործառույթը

2.Ընդունվել է ի գիտություն

6.Ընդունվել է ի գիտություն

20.Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատում

Կատարումը՝ ընթացիկ տարվա ավարտը

22.Ամենամյա գույքագրման փաստաթղթերը համապատասխանացնել սահմանված կարգին

Կատարված է:

26. Ավագանու նիստերի արձանագրությունները համապատասխանացվել է ՀՀ Կառավարության 2011թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված պահանջներին:

27.Ավագանու նիստերի հրավիրումը և գումարումը իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընդունվել է ի գիտություն

<u>Համայնքի ղեկավարի գործառույթը</u>

3.Համայնքի ղեկավարը ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:

Ընդունվել է ի գիտություն:

5.<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 32-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի՝ համայնքի ղեկավարը անհատական ակտեր ընդունելուց հետո երկօրյա ժամկետում այն ուղղարկել ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում

Ընդունվել է ի գիտություն

16.Ընդունվել է ի գիտություն

18.Ընդունվել է ի գիտություն

22.Ընդունվել է ի գիտություն

Համայնքի ղեկավար՝ Կ.Գրիգորյան